«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 39-2/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ • 19.03.2019թ. ժամը 15:10

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 09.01.2019թ-ին ստացված, «Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Ռոմեն Ահարոնյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ Մարտի 19-ին,15-00-ին հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու«Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ՝Ռոմեն Ահարոնյանը
Սնանկության գործով կառավարիչ՝ Վարդգես Բալաբեկյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Սնանկության գործով կառավարիչ՝ Վարդգես Բալաբեկյանը
Դիմումատու«Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ՝Ռոմեն Ահարոնյանը

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 09.01.2019թ-ին ստացված, «Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Ռոմեն Ահարոնյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց ներկաների ինքնություն և տեղեկացրեց որ նախորդ նիստի արդեն լսել են դիմումատու՝«Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ՝Ռոմեն Ահարոնյանի փաստարկները և եթե դիմումատուն այլ բան չունի ներկայացնելու ապա ձայնի իրավունք տան սնանկության գործով կառավարչ՝Վարդգես Բալաբեկյանին:

Դիմումատու՝«Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ՝Ռոմեն Ահարոնյանը ներկայացրեց,որ իրենց կողմից ինքնուրունաբար,ընկերության շահերի պաշպանության համատեքստում ներկայացվել էր վերաքննիչ բողոք՝ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործով «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին» դատարանի որոշումը մասնակի անվավեր ճանաչելու նպատակով,որը

ՀՀ Վերքննիչ քաղաքացիական դատարանի կողմից քննվելուց հետո 01.03.2019թ-ին կայացվել է որոշում մասնակի բեկանելով որոշումը և նշանակելով նոր քննություն:Ներկայացուչը նշեց նաև որ իրենք կառավարչից դա էին խնդրում և պահանջում,որը իրենց հնարավորություն կտար դատական կարգով պաշպանել իրենց շահերը:Ռ.Ահարոնյանը հանձնաժողովին ներկայացրեց Վերքննիչ դատարանի որոշման լուսապատճենը:

Հանձնաժողովի ախագահ՝Տիգրան հարությունյանը իր դիրքորոշումը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց «Այնթապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Վարդգես Բալաբեկյանին,ով մասնավորապես ներկայացրեց,որ ստանձնելով կառավարչի պարտականությունները իր կողմից ձեռնարկվել են միջոցներ ընկերության գույքի գույքագրման, պահպանման և իրացման ուղղությամբ,նշեց նաև որ սնանկության վարույթի ընթացքում ընկերությունում կատարվել է տնօրենների փոփոխություն,որի հետևանքով նախկին և ներկա տնօրենների միջև առաջացած ինչ-ինչ հարցերի պատճառով էլ այս դիմումը գրվել է ներկա տնօրենի ներկայացուցչի կողմից,բայց իր կողմից գույքագրումը կատարվել է միայն անշարժ գույքի վերաբերյալ և գրավի առարկա երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող,տան նկատմամբ,ելնելով այն հանգամանքից որ պարտատեր է վարույթում միայն բանկը և նրա պահանջն էլ պետք է բավարարվի գրավի առարկայի վաճառքից առաջացած միջոցների հաշվին:Վարույթի ընթացքում պարզվել է,որ գործարանի անշարժ գույքը որպես այլ պարտավորությունների կատարման ապահովման միջոց գրավադրված է այլ բանկում,որպիսի պարտավորությունների մարման համար էլ հետագայում այդ սնանկության վարույթում իրացվել է:Իրացումից ստացված միջոցների ավելցուկ մասի ստացման համար դիմել եմ այդ սնանկության գործով կառավարիչ՝Հ.Կոշեցյանին,որն էլ տեղեկանալով սնանկության հատուկ հաշվի առկայության մասին կարճ ժամանակում դրամական միջոցները պետք է փոխանցի այդ հաշվին այդ մասին 18.01.2019թ-ին գրությամբ պարզաբանել են,որը և ներկայավում է հանձնաժողովին:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին առ այն թե կառավարիչը տեղյակ է դատարանի այն որոշումից որտեղ քննարկվել է նույն դիմումատուի դիմումը:

Կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց 04.02.2019թ-ի ԱՎԴ/0001/04/16 որոշման լուսապատճենը:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը արտահայտեց հետևյալ կարծիքը,որ ուսումնասիրելով որոշումը պարզ է դառնում,որ բողոքը մերժվել է այն ներկայացնելու ժամկետների բաց թողման պատճառաբանությամբ,բայց գործի քննության ընթացքում արձանագրել է,որ կառավարչի կողմից «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կատարումն կատարվել է թերի և ընկերության շրջանառու միջոցների գույքագրումը չի կատարվել,որի կատարմանն էլ դատարանը պարտավորեցրել է՝սնանկության գործով կառավարչին:Տ.Հարությունյանը պարզաբանեց որ գույքագրման թերի կատարումը տվյալ դեպքում անգործության և իր պարտականություններին ոչ բարեխիղճ մոտեցման հետևանք է,որը ըստ «Սնանկության գործերով կառավարիչների Վարքագծի կանոնագրքի» 1.1.;1.3.1.5. մասերի խատում է,որի համար առաջարկեց միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդին ենթարկել կառավարչին կարգապահական տույժի,այն է հայտարարել բանավոր նկատողություն:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը համաձայնելով հանձնաժողովի նախագահի հետ, գտավ անհրաժեշ որպեսզի հայտնաբերված կարգապահական խախատումը վերացնելու համար սահմանվի 1 ամսյա ժամկետ:Հանձնաժողովի մյուս անդամները քննարկեցին առաջարկները և համաձայնելով քվերակեցին.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. .«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 09.01.2019թ-ին ստացված, «Այնքապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Ռոմեն Ահարոնյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Այնքապի տեքստիլագործ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Վարդգես Բալաբեկյանի գործողությունները/անգործություն/,օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 հիմքով հայտարարել բանավոր նկատողություն և հայտնաբերված կարգապահական խախտումը վերացնելու համար սահմանվի 1 ամսյա ժամկետ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան